## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

# ՈՐՈՇՈՒՄ

<<13>> հունիսի 2023թ. N ՄՈ/204 - -Ա

ք. Արմավիր

### «ԷՋՄԻԱԾՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԳՈՌ ԱՍԱՏՐՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 159-րդ, 163-րդ, 164-րդ հոդվածներով և 169-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1384-Ն որոշմամբ սահմանված N1 հավելվածի 19-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2023 թվականի հունվարի 5-ի NՄՈ/05-Ա որոշումը, «Էջմիածնի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Գոռ Ասատրյանի 2023 թվականի հունիսի 9-ի դիմումը

**ո րո շ ու մ ե մ՝**

1. «Էջմիածնի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Գոռ Ասատրյանին տրամադրել 2021-2022 թվականների աշխատանքային տարվա իր տեղափոխված արձակուրդի մասը՝ 2023 թվականի հունիսի 15-ից 19-ը ներառյալ՝ 3 աշխատանքային օր տևողությամբ:
2. Գոռ Ասատրյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Էջմիածնի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի բուժական գծով տեղակալ Սերոբ Մանուկյանին:
3. Գոռ Ասատրյանին աշխատանքի մեջ համարել 2023 թվականի հունիսի 20-ից:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Недействительная подпись

X

VERIFIED OCSP 13.06.2023 09:48:39 GMT+4

Подписано: HOVHANNISYAN EDVARD 2001830505

ՄԱՐԶՊԵՏ՝

Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ